

Ք. ԳԱԲՐԷԼՅԱՆ.

1933

ՊԱՅՅԱԿ  
ԴԱՐՆԻՔԻ ԳՈՒՐՁԸ

Զեյնալի քաղաքի համայնք

55/48



ՅԵՐԵՎԱՆ

— ԻՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ —  
— ԳԱՐՇԱԲԱՆ-ԿԵՆՏՐՈՆԻ ԿՆՍՏԻՏՈՒՄ —  
— ԱՍՊԻՐԱՆՏԻՐԱԿԱՆ —



ՉԱՅՔԱՐ ԴԱՐՎԻՆԻՉՄԻ ՇՈՒՐՁԸ.

Զարկ Դարվինի ուսմունքով բնագիտու-  
թյան պարզացման բնագավառում սկսվեց  
մի նոր դարաշրջան: Բնագիտության, հատ-  
կապես բիոլոգիայի բնագավառում կատար-  
վեց կտրուկ հեղաշրջում և դրա հետեվան-  
քով բնական գիտություններն ավելի արագ  
տեմպերով պարզացան: Դարվինի հիմնադո-  
րան եվոլյուցիայի սկզբունքը տարածվեց վրչ  
միայն բնագիտության մեջ, այլ նա գերիշ-  
խոջ տեղ գրավեց և ուրիշ գիտություննե-  
րում:

Մինչև Դարվինն ել բիոլոգիայի բնագա-  
վառում պայքարում էին եվոլյուցիոն և հա-  
կանվոլյուցիոն սկզբունքները: Դարվինի վժը  
մատերիալիստորեն լուսաբար ց բիոլոգիա-  
կան յերևույթները, որգանիվմների պարզաց-  
ման հարցը: Դարվինը վերջ տվեց բնական  
յերևույթների կրոնական, թեոլոգիական, թե-  
լեոլոգիական բացատրությանը:

Մինչև Դարվինը տիրապետում էր այն տե-



1-37739r

սակետը, թե կյանքը կայուն է, անփոփոխ  
և թե որգանհիվանդներն ստեղծագործվել են  
հիշտ այնպես, ինչպես վոր կան. իսկ յեթե  
վոմանք ել ընդունում էյին որգանհիվանդե-  
րի աստիճանական վարդացումը, - այդ հաս-  
կանում էյին այսպես. որգանհիվանդներն ստեղ-  
ծվել են աստիճանաբար, նախ պարզ ձե-  
վերը, ապա բարդ ձևերը, նրանք իրար հա-  
ջորդում են, բայց ազգակցաբար կապ-  
ված չեն և առաջացել են իրարից անկախ:  
Վոմանք ել մեջ էյին բերում աննյութ, ինչ  
վոր գերբնական ուժերի գերը (աստված,  
հոգի, Կենսական ուժ) և բնության յերե-  
վույթների մեջ տեմնում էյին նախամտած-  
ված ծրագիր, նպատակաբարձարություն:  
Որգանական ձևերի մարմնային հարմա-  
րանքները՝ շրջապատի պայմաններին, վե-  
րագրում ծին ինչ վոր գերբնական ուժին,  
վոր փոփոխել, հատուկ ծրագրով հարմա-  
րեցրել և որգանհիվանդները միջավայրին, վար-  
դացրել նրանց մեջ, նրանց վրա նպաս-  
տավոր, ոգտակար հատկանիշներ:

Դարվիներից առաջ ել կային իսկական

եվոլուցիոնիստներ, վորոնք այս կամ այն կերպ  
կովում էյին մետաֆիզիկ տեսակետների  
դեմ. այդպես էյին, որինակ, Բյուֆո, ժոֆրուա-  
-Ամենտ-իլնո, Տրեվիբանուս, Նուպի Կարվի  
(Կարվիի պապը, վորը սակայն զգալի թերու-  
թյուններ ուներ), ամենանշանավորը՝ ժան Լա-  
մարշը, նաև հռչակավոր բանաստեղծ Գյո-  
թեն: Սակայն վերոհիշյալ եվոլուցիոնիստնե-  
րը չկարողացան հիմնավորել եվոլուցիոն  
ուսմունքն այնպես, վոր նա համոզիչ դառ-  
նար, ավելի շուտ բավականանում էյին վերա-  
ցական դատողությամբ, իսկ առաջադրած  
փաստարկումները բավարար չէյին. ամենա-  
հիմնական բացն այն էր, վոր շատ քիչ էյին  
խոսում եվոլուցիայի պատճառների մասին:  
Վոմանք ել միատիկական անտեղի մեկնա-  
բանություններ անելով՝ շեղվում էյին գի-  
տական լուսաբանության ճանապարհից:  
Նույնիսկ ամենահամոզված եվոլուցիո-  
նիստ Լամարշը, վորը իր «Նենդանեբա-  
նության փիլիսոփայություն» գրքում բա-  
վական մանրամասն հիմնավորել էր եվո-  
լուցիոն ուսմունքը, նշել էր և վորոշ պատ-

ճառներ, նույնիսկ այդ համոզված եվրո-  
ցիոնիստը, Կիզելով ժամանակի պահանջին,  
բոլորովին անտեղի մեջ է բերում արար-  
չի մամնակցության հարցը: Նույն համարկը  
վիտալիստական գունավորում է տալիս իր  
մատերիալիստական ուսմունքին, խոսելով  
ինչ վոր «ներքին ձգտման» մասին, մի այն-  
պիսի «ներքին ուժի» մասին, վորը վորոշ ուշ-  
ուշայուշ էր տալիս որգանիվմների զար-  
գացման, նպատակահարմար փոփոխություն-  
ներին:

Եվրոցիոն ուսմունքի հակամատերիալիս-  
տական մեկնաբանությունները, ուշուշու-  
ները, լրացումները, - ունին իրանց սոցիալ-  
տնտեսական պատճառները, նրանք ժա-  
մանակի ազդեցության հետևանքներ են:  
Վորոշ անվճռականություն, տատանողա-  
կան դրություն նկատելի էր և Դարվինի  
ժամանակ, վորով բացատրվում են և Դար-  
վինի ուսմունքի մեջ նկատված խերություն-  
ները, անորոշ արտահայտությունները մի  
շարք սկզբունքային հարցերի նկատմամբ:

Եվրոցիոն և հակաեվրոցիոն տեսակետ-  
6.

ների պայքարը բնագիտության բնագա-  
վառում XIX դ. առաջին կեսում արտացո-  
լում էր յերկու դասակարգերի պայքարը -  
ազնվականության և ուժեղացող բուրժուա-  
չիայի: Ազնվականությունը և նրան սպասար-  
կող յեկեղեցին, կրոնը գեթ էյին եվրոցի-  
ոն սկզբունքին, վորովհետև նա շեշտում էր  
իրերի, յերեվույթների անկայունությունը, փո-  
փոխականությունը. այս սկզբունքն յեկակետ  
ընդունելով՝ բուրժուաչիան գիտականորեն  
հիմնավորում էր ազնվականության տիրա-  
պետության անցողիկ, անկայուն լինելը:  
Հակաեվրոցիոնիստները բնագիտության  
բնագավառում նահանջող, մեռնող դա-  
սակարգի՝ ազատականության գիտական  
ֆրոնտի իդեոլոգներն էյին:

Յերկու վերոհիշյալ տեսակետների ու-  
ժեղ բաշխում առաջ յեկնով 1830թ. ֆա-  
րիվում, ակադեմիայի կազմակերպած  
դիսպուտում: Երշտ այդ ժամանակ ֆարի-  
չի փոչոցներում բռնկվել էր հեղափո-  
խական շարժումը, պայքարը - ազնվակա-  
նության և բուրժուաչիայի միջև:

եվոլուցիոնիստները պարտվեցին, բայց եվոլուցիոն սկզբունքը չմոռացվեց, քանի վոր հեղաշրջվող կյանքը նպաստավոր պայմաններ եր ստեղծում նրա համար: Թեև ֆրանսիայում մի առ ժամանակ ռեակցիա տիրեց, եվոլուցիոն ուսմունքը տապալվեց, բայց նա կենսունակ լինելով, թեև դանդաղ, այնուամենայնիվ շարունակում եր իր վերելքը, մանավանդ Անգլիայում - ավելի ուժեղ բուրժուալիայի յերկրում: այստեղ արդեն ձևակերպվում, հիմնավորվում եր ապագա Դարվինիզմը: Դարվինի ժամանակ Անգլիայում արդեն նպաստավոր պայմաններ էին ստեղծվել եվոլուցիոն ուսմունքի ծավալման համար: Անգլիայում գյուղատնտեսությունն արդեն մտել եր արտադրության կապիտալիստական ձևի ֆալան, մանր գյուղատնտեսությունը նահանջելով տեղի եր տալիս խոշոր տնտեսություններին, վրոնք արդեն վորոշ քաղաքային ներկայացնում վարդացող արդյունաբերության համար, մատակարարում հումայթ գործարաններին, սննդամթերքներ

արդյունաբերական շրջաններին: Ժամանակի գործնական պահանջն արդեն նպաստավոր պայման եր դարվինիզմի ծավալման համար:

Եվոլուցիոն ուսմունքը ֆրանսիայում, Գերմանիայում ել ուներ ներկայացուցիչներ, բայց նրա հաջթանակը Անգլիայում պատահական յերևոյթ էր: Անգլիան խոշոր կապիտալիստական յերկիր եր. արդյունաբերության վերելքը վոչ միայն քաղաքում առաջ բերեց տեխնիկական հեղաշրջում, այլ և գյուղում: Գյուղատնտեսությունն ընդունել եր խոշոր արդյունաբերական բրնոյթ: Կենդանաբուծության, բուսաբուծության կապիտալիստական ձևը լայնորեն կիրառում եր տնտեսության գիտական նոր ձևերը, նոր տեխնիկան: Կայնորեն կիրառվում եր սելեկցիան, այսպես կոչվան արհեստական ընտրությունը կենդանական և բուսական նոր, արդյունավետ ձևեր առաջ բերելու գործում: Յեվ հենց այս աշխատանքներն արդեն խոշոր քաղաք ծառայեցին Դարվինի ուսմունքի

եական սկզբունքների համար:

Ինչպես ասում է Ենգելսը, Դարվինի գաղափարների մշակման համար հենց իր հայրենիքում չկար ուրիշ ավելի արժեքավոր փաստացի նյութ, քան այն տվյալները, վոր ստացավ նա անգլիական խոշոր կենդանաբուծությունից, և բուսաբուծությունից:

Ինքը Դարվինն էլ շեշտում էր, վոր մարդկանց միջոցով կարգացման ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի ձևերի ուսումնասիրությունն ավելի շատ կոծանդակի իր առաջադրանք տեսական հարցերի լուսաբանությանը. միաժամանակ նա նշում է, վոր դժբախտաբար բնագետները այդ պրակտիկ տվյալների վրա շատ քիչ էյին ուշադրություն դարձնում:

Դարվինի որոշ արդեն <sup>ներկա</sup> յեկան կապիտալիզմին հատուկ հակասական յերեկոյթները: Ավատականության դեմ վարած պայքարում՝ հեղափոխական և եվոլյուցիոնիստ բուրժուազիան չարտիստական շարժ.

ման ժամանակ յերկուշ կրելով իր տիրապետության կայունության համար, դառնում է կոնսերվատիվ, թեակցիոն դասակարգ և բոլոր միջոցները - պրակտիկ և իդեոլոգիական, ուշիում է նոր ծնվող դասակարգի - պրոլետարիատի դեմ: Թեակցիոն տնտեսագետ Մալթուսն իր „Գերբնակչության մասին“ աշխատության մեջ „Գիտականորեն“ հիմնավորում էր չքավորության, կապիտալիստական շահագործման „բնական“ անհրաժեշտությունը: Կորպես մարդկության կյանքի բարվոքության անհրաժեշտ նախապայմաններից մեկը նա առաջարկում էր - բազմացման կրճատում. այդ միջոցը, ըստ Մալթուսի, պետք է կիրառեր չքավոր դասը, վոր այդպիսով հնարավորություն ստեղծվեր „ազնիվ“ դասակարգի (այսինքն՝ բուրժուազիայի) բարգավաճման համար: Այս բուրժուական տնտեսագետի վորոշ ապդեցությունը մենք ներկատում ենք նաև Դարվինի վրա. այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի վոր Ինքը Դարվինը իր ժամանակի ծնունդն էր:

Թե ինչ չափով եր Դարվինն ազդված  
իր ժամանակի գաղափարներով - այդ  
մասին կխոսենք հետո:

Ասելք մի քանի խոսք Դարվինի և  
երա ուսմունքի հիմնական կետերի մա-  
սին, ապա կանգ կառնենք ուսմունքի  
թերի կողմերի վրա, նշելով այն կետերը,  
վորոնց շուրջը պայքար կա, վորոնք  
պետք է վերամշակվեն Մարքս-Էնգելսյան  
տեսակետով:

Դարվինը ծնվել 1809 թ. փետրվարի  
12-ին Շրյուսբերիում (Անգլիա): Երա հայրը  
բժիշկ էր, պապը - հայտնի բնագետ-բա-  
նաստեղծ երազմ Դարվինը:

Ակպբնական կրթությունն ավարտելով  
1825 թ. մտնում է Եդինբուրգի ձամալ-  
սարան բժշկական ֆակուլտետը, վորը չը  
ավարտելով մտնում է (1828 թ) Կեմբրիջի  
կրայստ կոլեջը (բարձրագույն հոգևոր գը-  
պրոց) աստվածաբանություն ուսանելու,  
քահանա դառնալու համար: Կոլեջն  
ավարտում է 1831 թ., բայց քահանա չի

դառնում. մի բարենպաստ դիպված հե-  
րավորություն է տալիս Երան միանա-  
լու ռազմագիտական մի էքսպեդիցի-  
այի դեպի անգլիական-գաղութները:  
Թե բժիշկ ուսանող յեղան ժամանակ  
և թե հոգևոր զարոցում նա հատկա-  
պես զբաղվում էր բնագիտություն, մա-  
նակցում բնագետ պրոֆեսորների աշխա-  
տանքներին: Կորպես թի թե շատ պատ-  
րաստված բնագետ ընդունվում է ռազ-  
մական նավ «Բիզլ»-ի վրա, ապա հինգ  
տարի Խանապարհորդում: Այցելում է Հա-  
րավային Ամերիկա, Ֆլադադոսյան կը-  
շըպիները, Յրո Յերկիրը, Բրայլիլիա, Տայի-  
տի, Կոր Ձելանդիա և ուրիշ շատ տեղեր՝  
հետաքրքրական գիտություն տեսակետից:

Այդ Խանապարհորդությունն իսկուր չան-  
ցավ: Ծանապարհորդությունից առաջ  
Դարվինը տեսական հարցերով չէր  
զբաղվում: Եվրոպիոն սկսվում էր նա  
ձանոթացավ Կայելի «Ճերկաբանության  
հիմունքները» գրքից, վորը Երա վրա թո-  
ղեց մեծ տպավորություն: «Ինքնակեն-

սագրութեան "մեզ Դարվինն ասում է. "վեր-  
ցրի հետս այդ գրքի առաջին հատորը,  
վորը և մանրամասն ուսումնասիրեցի. այդ  
գիրքն ինչ մեծ չափով ոգուտ տվեց և վոչ  
միայն մեկ ուղղութեամբ: Ամենաառաջին  
հետազոտութեանը, վոր յես կատարեցի  
Ման-Յագոյում, կանաչ հրվանդանի կը-  
ղզվիներում, ակնայտ դարձրին ինչ հա-  
մար կայելի հիմնական տեսակետի խո-  
շոր առավելութեանները, համեմատաբար  
ուրիշ աշխատութեանների հեղինակների  
գաղափարների հետ: »\*) Այլ կերպ ասած,  
Դարվինը համառաջն էր կայելի եվո-  
լուցիոն սկզբունքներին՝ յերկրաբանական  
յերևույթների նկատմամբ:

Պետք է ասել, վոր կայելի գիրքը բո-  
լորովին անհիմն դարձրեց մինչ նրան  
տիրող «կատաստրոֆների թեորիան», ըստ  
վորի բացասվում էր եվոլուցիոն սկզբ-  
բունքը և առաջադրվում միմիան կըտ-  
րուկ հեղաշրջումների սկզբունքը:

Դարվինը նանոթ էր նաև կամարկի՝  
"կենդանաբանութեան փիլիսոփայութեան"

գրքին, բայց սա նրա վրա ամենևին տը-  
պավորութեան չթողեց. ահա թե ի՞նչ է  
գրում այդ առթիվ Դարվին կայելին.  
« Դուք հաճախ հիշեցնում եք իմ թեորի-  
այի մասին, վորպես կամարկի՝ վարդաց-  
ման և առաջխաղացման ուսմունքի  
ձևափոխութեան: Յեթե այդպես է ձեր  
մտանված համոզմունքը, բան չունեմ  
ասելու դրան, բայց ինչ թվում է, վոր  
այդ այդպես չէ: Պլատոնը, Բյուֆոն, իմ  
պապը և ուրիշները կամարկից առաջ  
ել ասում էին, թե յեթե տեսակներն  
առանձին չեն ստեղծվել, նրանք այդ  
դեպքում պետք է ուրիշ ձևերից վարդա-  
նային. յես ուրիշ վոչ մի ընդհանուր բան  
չեմ տեսնում "Տեսակների նագման" և կա-  
մարկի մեջ: Կարծում եմ, վոր գործի այդ-  
որինակ պատկերացումը վնասակար է  
նրա ... հաջողութեան համար... յես  
յերկու անգամ մտանված կարդալուց  
հետո համարում եմ այն "խղճալի գիրք,  
վորից յես (շատ լավ հիշում եմ իմ վար-  
մանքը) վոչինչ ձեռք չբերեցի: »\*\*)

Մեկ տեղ էլ ասում է ., Թող ինն յերկինքը  
ազատի կամարկի հիմար՝ «ձգտումը դե-  
պի առաջագրիմությունն», «հարմարումն  
կեդրանու աստիճանական ցանկության  
հեռանակով» սկզբունքներից: <sup>122</sup>)

ճանապարհորդության ժամանակ բնու-  
թյան որյեկտների անմիջական դիտո-  
շություններն առաջ բերին նրա մեջ  
եվոլուցիոն գաղափարները: Դիտված բազ-  
մաթիվ փաստերն իրական դարձրին  
որգանիզմների փոփոխականությունը:  
Վերադառնալով Անգլիա, Դարվինն իրան  
ամբողջովին նվիրում է եվոլուցիոն ուս-  
մունքի մշակման: Այդ նպատակով նա  
կապ է հաստատում բազմաթիվ ագրո-  
նոմիական ընկերությունների, բուսաբույծ-  
ների հետ և նրանց տվյալները վորոշ  
բազա ծառայեցին կառուցվելիք ուսմուն-  
քի համար, վորը ձևակերպվեց դեռ 1842թ.:

<sup>122</sup>) Վ. Դարվին. Автобиография. изд. Ленинского  
б-го. 19 (տես՝ գրքիս էջ-14)  
<sup>123</sup>) Կույն. Сказание VII. Собрание соч. писателя. б-го 72  
(տես՝ գրքիս էջ-15)  
<sup>124</sup>) Կույն. էջ 7

Այդ ժամանակ նա արդեն համառոտա-  
կի գրի վեր առել ուսմունքի հիմնական սկզբ-  
ունքները: <sup>123</sup>)

Կոնդուում Դարվինը մտնում է մինչև  
1848թ., ապա տեղափոխվում է Դաուն ա-  
վանը և այստեղ մտնում միսյն կյանքի  
վերջն իր գնան կալվածքում:

1857թ. Դարվինն իր ուսմունքի հիմնա-  
կան թեզերի մասին գրում է ամերիկացի  
բնագետ Ալա Գրեյին: Դեռ յերկար ժամա-  
նակ Դարվինը կաշխատեք իր ուսմուն-  
քի վրա, բայց մի դիպված արագացրեց  
նրա աշխատության հրապարակ հանելը:  
Մի յերիտասարդ գիտնական Ալֆրեդ  
Ուոլլես ուղարկում է Դարվինին՝ եվոլու-  
ցիոն ուսմունքի առթիվ իր դիտողու-  
թյունների կոնսպեկտը՝ Դարվինի կար-  
ծիքն իմանալու և յեթե այդ դրական  
յեղով՝ հայտարարել գիտական շրջան-  
ներում:

\* Այդ կոնսպեկտի թարգմանությունը տես  
„Лог знаменитых парижан“ № 6. 1932

ՍՐԻՎ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА  
Матковского-Ломоносова

1-377394

Ձարմանալի վուգարիպությամբ: Ուրչեսի  
առաջագործած սկզբունքները նմանվում  
էին Դարվինի տրեքեոն: Կյայելլը և բու-  
սաբան հուկերը արդեն գիտեյին Դարվինի  
աշխատության մասին. սրանց ստիպ-  
մամբ Ուրչեսի կոնսպեկտի հետ միաժա-  
մանակ գիտական մի նիստում կարդաց-  
վում են և Դարվինի ուսմունքի հիմնա-  
կան թեզերը (1858թ.): 1859թ. Դարվինը  
լոյս է ընծայում իր առաջին տեսական  
աշխատությունը՝ «Տեսակների ծագումը  
գոյություն կռվում բնական ընտրու-  
թյամբ» անվան տակ: Գիրքն ունեցավ  
մեծ հաջողություն, կարճ ժամանակամի-  
ջոցում ունեցավ յերեք հրատարակու-  
թյուն (1859, 1860, 1861թ.): Այդ արդեն լավ  
ապացույց էր, թե վորչափ եվոլուցիոն  
ուսմունքը ժամանակի պահանջ էր:  
Դարվինիցմի շուրջը խոշոր պայքար  
առաջ յեկավ. մանավանդ լուրջ վրդով-  
ված էյին կղերական, կրոնական շրջան-  
ները: Դարվինիցմը հենց իր առաջին  
որերից ունեցավ սոկուն, յեռանդուն

պնշտականներ և տարածուկներ. այդպես էյին  
Անգլիայում: Հուլիսի, Գերմանիայում - հեկկե-  
լը, Ռուսաստանում - Տիմոխայևը:

Ուրչեսի ինք Դարվինն է ասում, իր առա-  
ջին գրքում չառ դիտմամբ չարծարեց մար-  
դու ծագման հարցը, վորովհետև գիտեր,  
վոր առանց այդ էլ մեծ աշմուկ էր առաջ  
գալու իր գրքի շուրջը. մի կողմից չէր ու-  
չում ավելի մեծ գրքիդ առաջ բերել, բայց  
ավելի շատ չխոսեց այն պատճառով,  
վոր բալական չէր համարում ունեցած  
փաստերը, ապա թերի լուսաբանու-  
թյամբ չէր ուչում անհամոզեցուցիչ  
դուրս բերել մարդու կենդանական  
ծագումը: Մարդու ծագման մասին դեռ  
իր ծանապարհորդության ժամանակ, միտք  
առաջացավ, յերբ «Հրո Յերկիրը» այդ էլ իս  
տեսավ նախամարդկային կենցաղով ապ-  
րոշ վայրենի մարդկանց: 1872թ. հրա-  
տարակում է «Մարդու ծագումը և սե-  
ռական ընտրություն» գիրքը, վորտեղ  
բազմաթիվ անժխտելի փաստերով հիս-  
նավորում է մարդու կենդանական

բնույթը և նագումը: Մի ուրիշ գիրք «Մար-  
դու և կենդանիների զգացումների արտա-  
հայտութայունը» լրացնում է նույն հարցը:

Իր առաջին գրքում Դարվինը շատ հար-  
ցերի վրա մանրամասն կանգ չի առել.  
Տետագայում մի շարք արձարձված հարցե-  
րի մասին առանձին գրքեր է լույս հա-  
նում. դրանք են՝ «Մագլցող բույսեր» (1864թ),  
«Չնտանեցրած բույսերի և կենդանիների  
փոփոխականությունը» (1868թ), «Միջատա-  
կեր բույսեր» (1875), «Խաչաձև փոշոտման  
ներգործությունը» (1876) և այլ:

Բացի այդ աշխատություններից հրա-  
տարակել էր բազմաթիվ ուրիշ մասնա-  
գիտական աշխատություններ, որինակ՝ «Ա-  
տոլլների-կորակլյան ոչաչև կշվիե-  
րի առաջացման մասին (յերկրաբա-  
նական հարց)», «Անձրևորդի դերը փտա-  
նյութի առաջացման պրոցեսում», ուր առ-  
սում է անձրևորդի կենսաբանական աշխա-  
տանքի մասին, վորի տեղեկանքով հողը  
հարստանում է փտանյութով:

Դարվինը վախճանվում է 1882թ. Ապ-

րիլի 19-ին:

1932թ. ապրիլին լրացավ նրա մահվան  
հիսնամյակը և այդ ողջ հիշատակվեց մի  
առանձնահատուկ ուշադրությամբ դեպի  
Դարվինի արած գործը: Կապիտալիստա-  
կան յերկրների կրիպիան ուժեղ պայքար  
է առաջ բերել և Դարվինի անվան  
շուրջը: Դարվինի դրի բուրժուական մեկնա-  
բանները աշխատում են Դարվինին ծա-  
ռայեցնել մեռնող դասակարգի, մեռնող  
կապիտալիստական հասարակարգի  
շահերին:

Դարվինի ուսմունքի ազդեցությունը  
Բիոլոգիայի վրա շատ բնե էր: Բիոլոգի-  
ական հարցերի ուսումնասիրության բնա-  
գավառում նա մտքեց մատերիալիստա-  
կան մեթոդը: Մի շարք գիտություններ,  
ինչպես սաղմնաբանությունը, համեմատա-  
կան անատոմիա, ֆիլոլոգիա և ուրիշ.  
Դարվինի դրի թարմ հոսանքով դրվեցին  
նոր հիմքերի վրա և նրանց վարդա-  
ցումն ավելի արագ տեմպերով ընթա-

ցավ առաջ: Բնության յերևոյթաներին նա մոտեցավ պատմականորեն, Բնական յերևոյթաներն ուսումնասիրվում էյին Վարգացման, փոփոխականութեան տեսանկյունով: Բիոլոգիական շատ յերևույթներ, վորոնք թեոլոգիական, թեկնոլոգիական տեսակետից. էյին լուսաբանվում, այժմ ստացուն ավելի հիմնավոր և բնական բացատրութիւն:

Դարվիւի ումունքում շոշափվում են յերկու հիմնական հարցեր, իրար հետ սերտ կապակցված.

1. Եվոլուցիայի փաստի ապացուցելը, հիմնավորելը:
2. Եվոլուցիայի պատճառների լուսաբանութիւնը:

Առաջին հարցի մասին թեև Դարվիւի սիստեմից առաջ էլ խոսողներ կային, Բայց միայն Դարվիւնը կարողացավ յեղան փաստերն ամփոփել, նոր փաստեր ավելացնել և այնպես նրանց մեկնաբանել, վոր Եվոլուցիայի փաստն ահսերջեի դարձավ: Բացմասթիվ փաստեր էյին բերված համե.

մատական անատոմիայից, պալեոնտոլոգիայից, սաշմնաբանութիւնից, կենսաշխարհագրութիւնից: Ինքը Դարվիւնը լիվ չէր համարում իր տվյալները, նա նշեց իր ումունքի լավ չլուսաբանված հարցերը, նրանց թերի կողմերը, որինակ՝ յերկրաբանական տվյալների պակաս լինելը, միջակա ձևերի բացակայութիւնը և այլն: Համենայն դեպս շնորհիվ Դարվիւի՝ Եվոլուցիայի փաստը վերջնականապես հաստատվեց:

Բայց Դարվիւի ումունքում էյակուն կողմը — Եվոլուցիոնիստի հաստատման փաստը չէ, այլ այդ Եվոլուցիայի պատճառների լուսաբանութիւնը: Մինդարվիւյան Եվոլուցիոնիստները շատ քիչ էյին խոսել պատճառների մասին:

Դարվիւնն ամենից առաջ ուսումնասիրեց Անգլիայի արդյունաբերական գլուխատնտեսութեան նվաճումները, մանապէս կենդանաբանութեան բնագավառում: նա նշեց մարդու դերը կուլտուրական բոյսերի և ընտանի կենդանական ձևե.



ևակ Կիրառվող արժեքատակարար ընտրու-  
թյունն արդեն մեծ արդյունքներ էր  
տալիս բուսարտեմոթյան և կենդանու-  
թուծութեան բնագաղափարում Դարվիչը բե-  
րում է այսպիսի որոնակ. «անց լիակալ  
փորձի պահանջ առաջադրեց, վոր իս-  
պանական աջաջաշի կատարն ուշա-  
հայաց լիներ, մինչ զեռ առաջ նա կատ  
ընկան էր մի կողմ և հինգ տարուց  
հետո այդ նպատակն իրագործվեց. և ը-  
րանք պահանջեցին, վոր հավերժ մորու-  
թափոր լինեն և վեց տարի անց առաջ  
բերվեց մորութափոր հավերի 57 խումբ:»

Մի ուրիշ որոնակ. կոնդուսի համաշխար-  
հային ցուցահանգեսում ցուցադրվան  
եր արժեքատակարար ընտրութեամբ առաջ  
բերան բեշմուսավոր ցորենը: Այդ ցորենը  
ստացվեց հինգ տարվա ընթացքում.  
«1857 թվ. ցանան էր 87 հատիկ (տասը  
հատիկց. ցորենը՝ տեկավոր ձևից էր): Այս  
ձևի ամենալավ հատիկ հատիկներն ա-  
ռանձին ցանվեցին և մեկը նրանցից  
տվեց 1.190 հատիկ (տասնյոթ հատիկ):»

Այս որոնակի հետ վարվեցին այնպես,  
ինչպես և նախորդի, այսինքն՝ նրա սնե-  
րալավ հասկի ցորենն առանձին ցանվեց  
և մեկը նրանցից 1860 թվ. տվեց 2145 հա-  
տիկ (38 հատիկով), այսպես ուրեմն, 638  
հատիկ տվող ցորենից յեքորոր տա-  
րում ստացվեց 2145 հատիկ:»

Այս որոնակները նշում են արժե-  
քատակարար ընտրութեան խոշոր գերը:  
Մեր ժամանակ այդ մեթոդն ավելի  
մեծ արդյունքներ է տալիս շնորհիվ  
նրան, վոր գիտութեանն արդեն գործ-  
նակառու շեկավարվում է մեծերի  
ժառանգականութեան որոնքներով: Դար-  
վին էլ իր ժամանակին առաջադ-  
րեց, պահանջեց իսկ՝ ժառանգակա-  
նութեան անհաջող թերթան, վորից  
ուշը Դարվիչն էլ բավարարվան չէր  
և համարում էր նրան վորպես ժա-  
մանակավոր մի յեթադրութեան:

Ընտանի որգանիվներին ծագման,  
վարդացման հարցի լուսարանու-  
թյունն ոգնեց Դարվիչին պարզելու

վայրի բուսական և կենդանական որգա-  
նիվմների բազմաձևությունը, նրանց փո-  
փոխականությունը: Վայրի բնության մեջ  
ըստ Դարվինի գործում է բնական ըն-  
տրությունը - անգիտակցական մի գոր-  
ծոն, վորի դրգապատճառներն ել բնա-  
կան յերևույթներ են: Մալթուսի (բուրժուա-  
կան տնտեսագետի) ֆորմուլան մարդկո-  
թյան գերբնակչության առթիվ Դարվինը  
կիրառեց կենդանական և բուսական աշ-  
խարհների նկատմամբ. սակայն Մալ-  
թուսի թեորիայի կիրառման հարցում  
Դարվինն ունեցավ թերի կողմեր, վո-  
րոնք բացատրվում են նրանով, վոր Դար-  
վինն ել, վորպես իր ժամանակի ծնունդ  
ազատ շմնաց բուրժուական իդեոլոգի-  
այի ազդեցությունից. այդ մասին կխո-  
սենք քիչ հետո:

Դարվինը բնական ընտրության հիմ-  
նական պատճառը տեսնում էր գոյու-  
թյան կռվում, իսկ վերջինս հետևանք է  
համարում որգանական ձևերի գեր-  
բազմացման: Դարվինը բերում է մի

շարք որինակներ, վորոնք իսկապես պատ-  
կերացնում են, թե ինչպիսի հսկայական  
քանակությամբ են բազմանում որգա-  
նիվմները. Կոչնիսկ ամենաքիչ սերունդ  
տվող մեկ փշից, վոր ունենում է մի-  
այն վեց ձագ (30-90 տարիներում), 250  
տարի առց, յեթե բոլոր սերունդներն  
ել պահպանվեն, կստացվեն 19 միլիոն  
փշեր: իսկ շատ կենդանիներ (ձուկ,  
վորդ) և բույսեր անհամեմատ շատ ա-  
վելի ռեժ սերունդ են տալիս:

Սերունդի քանակի և սենդի չափի  
անհավասար լինելուց առաջանում է  
պայքար - գոյու թայան նախ: Գոյու-  
թյան կռվի սկզբունքը Դարվինի դմի  
հիմնական կետերից մեկն է: Գոյու-  
թյան կռիվը Դարվինը հասկանում  
է լայն մտքով. պայքարը տեղի յե ու-  
նենում որգանիվմի կյանքի բոլոր շճր-  
ջաններում: Գոյության կռվում պահ-  
պանվում են նրանք, վորոնք լավ են  
հարմարված բնական պայմաններին:  
Կարող է հաշիթել և ֆիլիկապես

Թույլը, բայց ազեի լազ հարձարվածը  
շերջապատի պայմաններին:

Գոյության կռիվ ճեռեանքն է բնա-  
կան ընտրությունը, անփութակցական  
մի գործոն, զոր պարտ է առանց վոր  
և է նախամտան ծրագրի, նպատակի:  
Բնական ընտրության պղծցումը լուծ  
ազեի յերկար ժամանակից ճանաչ  
տալիս տրագիդիաներ, ջան արժանա-  
կան ընտրությունը. առաջին գծաբան  
ընտրյալ որբանիցը չի մեղանաց-  
վում, ճեռեամբար նա նորից կարող է  
խանդել և սղախտով ընտրվան հաս-  
կանիչը կթուանա, կանճեսունա:

Արժեստական ընտրությունն անում  
է մարդը, նախորդ ծրագրվան նպա-  
տակով և կարճ միջոցում նոր ձևեր  
են առաջ բերում:

Համաձայն առաջագրան՝ հառչա-  
նիչների խոտորման սկզբունքի  
Դարվինը պարզաբանեց, թե հիշյան  
սկզբնական ձևերից ժամանակի ըն-  
թացքում աստիճանական փոփոխա-  
30.

կանությունը առաջանում են մի  
քանի հյուղեր, վորոնք նույնպես հյու-  
ղավորվում են: Ծով յերբ մի շարք  
մի շարք միջակա ձևեր անճետանում  
են, այդ դեպքում մեծ տարբերություն  
է նկատվում սկզբնական ձևի և նրա,  
որինակ, 100-րդ, կամ 1000րդ և այլն  
սերանդների մեջ: Թրեմն, բոլոր կեն-  
դանական ձևերը, թեև շատ բանե-  
րում իրարից տարբերվում են, բայց և  
այնպես մի քանի հիմնական ձևերի  
հոտորման, չարգացման արդյունք են:

Սկզբնական ձևից ժամանակի ըն-  
թացքում նոր ձևեր են առաջա-  
նում, սրանք ել իրանց ճեռքին նոր  
հյուղեր տալիս և այդպես, յերկար  
ժամանակի ընթացքում վորև է տե-  
սակից առաջանում են նոր տեսալ-  
ներ, ցեղեր, դասեր և այլն:

Գոյության կռիվ և բնական ընտրու-  
թյան որեւքներով Դարվինը լուսա-  
բանեց մի շարք այնպիսի բնական  
յերևույթներ, վորոնց առաջանալը

մինչ նրան վերագրում էյին բնութայն  
տեղ գործող «գիտակից ուժին», այնպի-  
նի գործողներին, վորոնք նախամտած-  
ված ծրագրով առաջ էյին բերում  
ձգարժանարի նպատակահարմար» հատ-  
կանիչներ: Եվ ուղղի ոն թեորիան բնական  
լուսաբանություն տվեց այնպիսի յերե-  
վոյթներին, ինչպես կենդանիների հովա-  
նավորող գունավորությունը, ձևերը (նմա-  
նություն գոյնով՝ շրջապատի գոյնին,  
ձևով շրջապատի անկենդան և կենդանի  
ժարժիներին), դիմելավորում (լավ պաշտ-  
պանված որգանիցմին նմանվում է ան-  
ոգնականը), նախապաշարացնող գունու-  
վորում, ձևեր և այլն:

Դարվինը լուսաբանեց մի յերևույթ ևս,  
այն է՝ սեռերի արտաքին տարբերություն-  
ները, այսպես կոչված՝ յերկրորդական  
սեռական հատկանիշների առաջ գա-  
լու հարցը:

Այդ հատկանիշներից են, որինակ՝ ա-  
բաղաչի կատարը, փարթամ պոչը,  
կանչը, առյուծի բաշը, յնչչերուների

յեղջյուրները և այլն: Սեռական կյանքի  
հետ կապված հիշյալ հատկանիշների առաջ  
գալը Դարվինը վերագրեց «սեռական ըն-  
տրություն»: Արուների քանակը, համեմատա-  
բար եգերի հետ, ավելի շատ է տեղի ու-  
նի պայքար արուների մեջ եգերի համար-  
վանալան աչքի ընկնող հատկանիշներ ու-  
սեցող արուները պայքարում հաջթող են  
հանդիսանում, ավելի հեշտ տիրանում  
եգին, ապա և սերունդ ունենում, իսկ  
վերջինս ժառանգում է նոր հատկանիշը-  
նյլ կերպ ասած, կատարվում է արունե-  
րի անգիտակցական ընտրություն:

Այդ բացատրությունը համամիտ շեր  
Ուոլլեսը բայց վերջինիս իդեալիստական  
լուսաբանությունն առավել ևս ստորնդունե-  
լի յե: Եհշտ է, Դարվինի բացատրությունն  
ունի թերի կոչմեր և կան մի շարք հա-  
կասական փաստեր, բայց և այնպես առ-  
այժմ ավելի հավանական է համարվում  
Դարվինի տեսակետը. միայն պետք է շեշ-  
տել, վոր յերկրորդական սեռական հատ-  
կանիշների առաջ գալու պրոցեսում

խոշոր դեր են կատարել մարմնի ներ-  
կատ գեղձերը (նրանց արտադրած հոր-  
մոնները):

Մենք նշեցինք Դարվինիզմի հիմնա-  
կան սկզբունքները:

Կանգ առնենք այժմ այն հարցի վրա,  
թե Դարվինիզմն ի՞նչ թերի կողմեր ու-  
նի. այդ առթիվ արդեն մի քիչ արտա-  
հայտվեցինք.

Դեռ Դարվինի որոշ, նրա բազմաթիվ  
հետևողներն սկսեցին Դարվինիզմի  
լուսցման, աշխատանքները, նոր փաս-  
տարկումներ ավելացրին յեղանին:

Մեզ ավելի հետաքրքրում են այն թե-  
րի կողմերը, վորոնք բխում են Դար-  
վինի ժամանակաշրջանի պայմաններից:

Դարվինը գերակշռող նշանակություն  
եր տալիս որգանիզմների աստիճանա-  
կան զարգացման, փոփոխականությանը:  
Թեև ինքը Դարվինը նշեց մի քանի  
որինակներ կտրուկ, թիչքային փոփոխու-  
թյունների վերաբերյալ, բայց հատուկ

կանգ չառավ այդ յերևույթի (նրա ժամա-  
նակ հազվագյուտ) ուսումնասիրության վրա:  
Իսկ այժմ մենք գիտենք Դե-Յրիզի,  
նրանից առաջ ուսու բուսաբան Կոր-  
փնսկու և ուրիշների ուսումնասիրու-  
թյուններից, վոր որգանական աշխար-  
հում հազվագյուտ յերևույթ է ևսև  
թռիչքային փոփոխականությունը:

Բնական է, թե ինչու Դարվինը հատ-  
կապես կանգ չառավ այդ յերևույ-  
թի վրա. նախ-շատ աննշան փաս-  
տեր ուներ, մյուս կողմից-ժամանակա-  
կից բուրժուական գիտությունն արձագան-  
քում եր բուրժուապիայի շահերը: Թեև  
բուրժուապիան ուժեղացել եր, տիրող դիր-  
քերն իր ձեռքն առել, բայց հենց այդ շըր-  
ջանում յերևան յեկան այն հակասու-  
թյունները, վորոնք բնորոշ են կնապիտա-  
լիստական հասարակակարգի համար:

Զարտիստական շարժումը բուրժուա-  
պիային յերկյուղի մեջ եր գցել. դասա-  
կարգային պայքարը նոր ետապի մեջ  
եր մտնում: Բուրժուապիայի հանդեպ բար-

ճրանում էր նոր դասակարգ - պրոլետարիատը: Բուրժուազիան բոլոր միջոցներին եւ դիմում էր իր կայունության անխախտությունը հիմնավորելու համար: Մալթոսի ռեակցիոն թեորիան գալիս էր արդարացնելու բանվոր դասակարգի շահագործման անհրաժեշտությունը. հեղափոխական հեղաշրջումներն այլևս նրան չէին կարող գրավել: Խոսել այն մասին, թե բնության մեջ կատարվում է նաև թռչող քային փոփոխականություն, մանրամասն այդ հարցով պաշտպան և ապացուցել նրա իրական լինելը - կոչումները՝ ընդունել մարդկային հասարակության մեջ ևս հեղաշրջումների անհրաժեշտությունը. բայց բուրժուազիան մտադիր չէր նոր հեղափոխություններ, թռչքներ, թռչքային փոփոխություններ ապրել. նրա իդեոլոգները գիտական ֆրոնտում (տղետեսագետներ, բնագետներ) պաշտպանում էին բուրժուազիայի տեսակետը:

Զավորության պատճառները ժամանակից տնտեսագետ Մալթոսը ցուցատրում էր նրանով, վոր մարդկությունը շատ արագ տեմպով է բազմանում, չքավորությունը նա համարում է. մարդկության գերաճման հետևանք: Այն մասսան, վոր դժգոհ էր իր վատթար կացությունից, Մալթոսի կարծիքով, ամենամեծ սպառնալիքն է մարդկության ապատության, բարեկեցության: Տեղևարար, յեղբակացում է նա, չքավոր, բանվոր դասակարգը պետք է զսպի իր բազմացումը: Մի ուրիշ անգլիացի՝ Մարկուսը նույնիսկ առաջարկում էր բանվորների յերեխաներին վոչնչացնել և սպալիսով կանխել ապստամբությունների սպառնալիքը:» Գոյության կռվում ըստ բուրժուական գիտության, գերիշխող տեղը պետք է գրավի «բարձր, ընդունակ, ունևոր դասակարգը», վորը և «միակններկապացուցիչն է մարդկության կուտուրայի.

հհարկե, Դարվիւն, վորպես այդ եպոխայի  
ենունդ և բարձրակաւն միջավայրի  
հետ կապված, չեր կարող չապրվել Մալ-  
թուսի ուսմունքից:

Դարվիւն գերագնահատեց գոյութայն  
կովի սկզբունքը, ընդլայնեց նրան, մասամբ  
կիրաւորով և մարդկային հասարակութայն  
եվոլուցիայի նկատմամբ: Այդ հանգա-  
մանքն ոգտագործեցին սոցիալ-ֆաշիստ  
բնագետները, վորոնք մարդկային հա-  
սարակութայն յերևույթներն էլ բացատ-  
րում էին բիոլոգիական որեւքներով, բո-  
լորովին նկատի չառնելով նրա ուրույն  
ինելը, մարդկային հասարակութայն-  
վորակապես նոր որգանակաւն համա-  
կեցութուն լինելը: Ենգելսն այդ առթիվ  
գրում է. « Գոյութայն կովի ամբողջ  
ուսմունքը - փոխանցումն է Գորսի  
«պայքար ամենքի բոլորի դեմ» ուսմուն-  
քի և բարձրակաւն տնտեսական մըր-  
ցրման ուսմունքի, ապա և Մալթուսի  
«ազգաբնակչութայն թերրիայի փո-  
խանցումն և մարդկային հասարա-

կութայն սփերայից որգանակաւն աշ-  
խարհի բնագավառը: Այդ ֆոկլուսն  
անելով (վորի անպայման որինաչա-  
փութայունը, մանավանդ, Մալթուսյան  
ուսմունքի, դեռ վիճելի չէ), շատ հեշտ  
է հետո փոխանցել բնութայն պատ-  
մութայունից հասարակութայն պատ-  
մութայն բնագավառը:»\*)

Ոգտագործելով Մալթուսի ֆորմու-  
լան Դարվիւն ասում է. « Այդ (պսիւն-  
քը, իր ուսմունքը. Ռ. Գ.) Մալթուսի  
ուսմունքն է ավելի մեծ չափով կի-  
րաւորած բուսական և կենդանա-  
կան աշխարհի նկատմամբ և կիր-  
աւորած ամենալուրջ մտքով, վո-  
րովստեւ այս դեպքում չի կարող  
ապրել թե մենդի արհեստակաւն  
աճեցումը և թե ամուսնութայունից  
չգույշ ձեռնպահ լինելը:»\*\*)

\*), Энгельс. Диалектика природы. 62-44.

\*\*), Ч. Дарвин. Происхождение видов.  
изд. Лепковского. Москва. 62-107.

Այս տողերից յերևում է, վոր Դարվինը մալթոսի ֆորմուլան (այն է՝ որգանիվները բազմանում են յերկրաշափական պրոգրեսիայով, իսկ սնունդն աճում՝ թվաքանական պրոգրեսիայով) լրիվ կիրառում է միայն կենդանական և բուսական աշխարհների նկատմամբ, մյուս կողմից հատկանշական է մի հանգամանք՝ մարդկության վերաբերող, այն, վոր նկատի չի առել մալթոսն իր ֆորմուլան կառուցելով: Դա - « սննդի արժեքատարած աճեցման » հարավորուելունն է, վոր բնական է համարում Դարվինը մարդկային հասարակության մեջ, մինչդեռ մալթոսն այդ հանգամանքը մի կողմ ձգելով՝ արդարացնում է կապիտալիստական շահագործումը, չբավորի բազմացման կրճատումը, յեւելով սննդի պակասությունից: Ինչպես տեսնում ենք, Դարվինը կիրառելով մալթոսի ֆորմուլան կենդանիների և բույսերի նկատմամբ, միև-

նույն ժամանակ նշում է մի հանգամանք, վոր ցուցաբերում է մալթոսի ֆորմուլայի անհիմն լինելը նույնիսկ մարդկային հասարակության նկատմամբ:

Գոյություն կռվի սկզբունքին Դարվինը գերակշռող տեղ տվեց: Ենթելալ, կրապոտկինը շատ ճիշտ նկատում են, վոր որգանական աշխարհի վարքացման ֆակտոր ընդունել միայն գոյության կռիվը չի կարելի, քանի վոր կան բազմաթիվ որինական կենդանիների համագործակցության, փոխադարձ ոգնություն: Կրապոտկինն իր գրքում՝ « փոխադարձ ոգնությունը վորպես էվոլյուցիայի գործոն » բերում է բազմաթիվ որինական կենդանիների համագործակցության: Դարվինն ել չի միտել համագործակցության փաստերը, քայց առաջնակարգ տեղ տալով գոյության կռվին անտեսել է մյուս ֆակտորները և առավել ևս մեծ պաշտ է արել, վոր նույն սկզբունքով փորձել է մոտենալ մարդկային հասարակության վարքացման հարցին:

\*) Л. Краноткин. Взаимная помощь как фактор эволюции.

«Գոյութեան» կովի գահափարը, ինչպես ցուց  
ե տալիս Մալթոսի ուսմունքը, ընթանալու  
եր բուրժուական Անգլիայում, դրանով բուր-  
ժուական ցանկանում էր հիմնավորել իր  
գերակշռող դիրքը բնութեան մեջ: Ասկայն  
Դարվինը մի կողմից շեշտելով գոյութեան  
կովի առանձնահատուկ նշանակությունը,  
միաժամանակ նշում է հետևյալը. « յես  
պետք է նախապահուցանեմ, վոր այդ արտա-  
հայտությունը (այսինքն՝ գոյութեան կովի Ռ.Գ.)  
կիրառում էմ լայն և փոխաբերական (մետա-  
ֆորիկ) մտքով, մտցնելով սրա մեջ մեկ նյու-  
թի կախումը մյուսից, նմանապես նկատի  
առնելով (վոր ավելի նշանակալից է) վոչ  
միայն մեկ անհատի կյանքը, այլ և նրա հա-  
ջողությունը իրան սերնդով ապահովելու  
մեջ: Canis (կանիս. շների) ցեղի յերկու կեն-  
դանիների մասին սովի շրջանում կա-  
րելի յե բոլորովին ճիշտ ասել, վոր նրանք  
պայքարում են իրար հետ սննդի, կյան-  
քի համար; բայց անապատի յեկրի բույ-  
սի մասին նույնպես ասում են, թե նա  
պայքարում է յերաշտի դեմ, թեև ճիշտ

կլիներ ասել, վոր նրա կյանքը կախված է  
խոնավութեանից:»<sup>\*)</sup>

նույն տեղ գրում է. « կյանքի ճայրագոյն  
աստճաններում, բնվեռային յերկրներում,  
կամ անապատի ճայրամասերում դադա-  
րում է ամեն մի մրցում:»<sup>\*\*)</sup> « Գատերապմ,  
վոր տանում է բնութեան, ունի իր ընդհա-  
տումները:»<sup>\*\*\*)</sup>

ինչպես վերև ասացինք, Դարվինի փոխ-  
դի կողմերից է նաև - Թոնի քային փո-  
փոխաշահությունը թերագնահատությունը:  
Մենք ուշեցինք դրա պատճառը, բայց և այն-  
պես բացը մնում է բաց. սակայն թիչքների  
թեորիան ամենևին չի հակասում Դարվի-  
նի փոխ (անացինք, վոր Դարվինն էլ չփխտեց  
նրանց դերը), այլ նրա անհրաժեշտ լրա-  
ցումն է: Սխալ է հակադրել աստիճանա-  
կան զարգացումը Թոնի քային զարգաց-  
ման յերկուսն էլ իրար հետ կապված, իրար  
հաջորդող յերևույթներ են: Ասել, թե Թոնի -

\*) Կ. Դարվին. Թրուստոսոսոսոսոսոսոսոսոսոս . Եջ. 117

\*\*) նույն. Եջ 116

\*\*\*) նույն. Եջ 117

քայն փոփոխությունը ժառանգական է, իսկ Դարվինի նշան առհասարական շեղումները ժառանգական չեն, սխալ կրնի, քանի վոր Դարվինը նկատի յն առել միայն ժառանգական հատկանիշները. եյականն այն է, վոր Դարվինը խոսում է միմիայն ժառանգաբար փոխանցվող հատկանիշների մասին: Մենք արդեն նշեցինք Դարվինի խոսքերը այդ առթիվ (սվող ժառանգական փոփոխությունը մեզ համար եյական չեն):

Գիտության կողմից ընդունված է ժառանգաբար չփոխանցվող փոփոխություններն անվանել ֆլուկտուացիա, իսկ ժառանգաբար փոխանցվողները - մուտացիա. մեթոս ընդունենք այդ ստորաբաժանումը, ապա պետք է ասենք, վոր Դարվինի առաջադրանքը - աստիճանական, թույլ մուտացիաներ են, իսկ Դե-Ֆրիվինը - կտրուկ, ուժեղ մուտացիաներ: Հետևաբար կարող ենք ասել, վոր Դարվինը կտրուկ մուտացիաների մասին շատ քիչ է խոսել, նշել է միայն մի քանի որինականեր:

Այդ թույլ քայն կտրուկ փոփոխությունները Դարվինը նպաստավոր է համարում իր ուսմունքի համար: Ահա ինչ է գրում Դարվինը Ալա Փրեյնի թույլ քայնի մասին. «Ճես շատ եմ խորհել հանկարծակի (սեզոնում) խոր փոփոխությունների մասին, դրանք միևնույն ժամանակ կլինեյին բարենպաստ կյանքի համար և ժառանգաբար կփոխանցվեյին: Ճես իհարկե դրանց գոյության դեմ չեմ կարող վող մի լուրջ առարկություն անել: Փաստորեն սցդ. նպաստավոր կլիներ իմ թեորիայի համար:»

Ինչ վերաբերում է հատկանիշների ժառանգական փոխանցման, այդ հարցում Դարվինի տեսակետն այն էր, վոր ձեռք բերված հատկանիշները ժառանգաբար փոխանցվում են. իսկ ձեռք բերված հատկանիշների առաջանալը նա վերագրում է մի շարք յերևույթների ներգործության, ինչպես, որինակ, միջավայրի անմիջական ազդեցության, մասամբ գործարանների վարժության - յերկու գործոններ, վորոնք հիմնական կետերն է համարյի ուսմունքի:

Դարվինը վորոշ նշանակություն էր տալիս նաև կյուվիեյի առաջադրած ճատկանիշների կորրեկացիայի որենքին (վորոշ է՝ վորս է գործարանի փոփոխությունն առաջ է բերում փոփոխություններ մի շարք ուրիշ գործարաններում): Կերոհիշյալ գործոններին այնուամենայնիվ Դարվինն առաջնակարգ նշանակություն էր տալիս. նրա ուսմունքի հիմնական սկզբունքն է - բնական ընտրությունը:

Ձի կարծիք Դարվինին մեղադրել այն բանում, թե նա չկարողացավ լրիվ լուսաբանել փոփոխության պատճառները: Դարվինի բերած պատճառաբանություններն իհարկե կարիք ունեն քննության, լրացման, համեմատելի դեպք Դարվինը նախագծեց ընդհանուր սկզբունքները: Չմոռանալով, վոր այժմ էլ մեք որերի գիտությունն էլ դեռ այդ հարցը վերջնականապես չի լուծել: Իսկ Դարվինի բնական ընտրության որենքը վոր միայն չի կորցրել իր նշանակությունը, այլ Դարվինի դիսկուսիայի ազդեցությանը խոշոր չափով պետք է վերագրել

այն, վոր առաջ յեկավ գեո. է. տի. կա. գիտությունը, վոր հատկապես զբաղվում է փոփոխականության և ժառանգականության որենքների լուսաբանությամբ:

Այնուամենայնիվ Դարվինն ազատ չէր մնաց բուրժուական իդեոլոգիայի ազդեցությունից: Կիշտ հիմքերի վրա կանգնաց՝ բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ, Դարվինը յերբ փորձեց վորոշ մտքեր հայտնել մարդկային հասարակության առթիվ, - հեռու չգնաց ժամանակակից իդեոլոգիայից: Ուշագրավ է այդ տեսակետից նրա մի նամակը գրած Գրեխեմին. «Ցեա կարող էյի ամենայնաանդուն կերպով պաշտպանել այն փաստը, վոր բնական ընտրությունն առել է և անում է քաղաքակրթության համար ավելի, քան պատկերացնում են բոլորը: Յիշեք, վորքան մեծ էր յեվրոպական ազգությունների համար բազմաթիվ դարերի ընթացքում տարիների կողմից կեղեքվելու վտանգը և վորքան ծիծաղելի յե անան քաղաքացիները»

Քարն այժմ: Այսպես կոչված ջաղաքակիրթ  
րասաները գոյություն կուզում հաղթահարե-  
ցին տանիկներին: Ճեթն դուր նայեց թի թե  
շատ մոտ ապագան, կտեսնեք ինչքան  
բազմաթիվ ստորին րասաներ վունչաց-  
վելու յե յերկրի վրա ավելի բարձր քա-  
ղաքակիրթ րասաների կողմից:»

Այս տողերում արդեն հնչում են բուր-  
ժուական բասսայական թերոխայի լարե-  
րը: Հենվելով այսպիսի «յեզրակացու-  
թյունների» վրա բուրժուական գիտնա-  
կաններն արդարացում են գաղութային  
ջաղաքականությունը, «ստորին» րասա-  
ների ազդեցությունների ապատագրական  
հեղափոխական շարժումների ճնշումը,  
ազգային շովինիզմը, սև րասայի (ո-  
րինակ՝ նեգրերի) հալածանքները. յեվ այդ  
բոլորն անում են, գիտություն հիման  
վրա, իսկ այսպես կոչված՝ սոցիալ-  
դարվիստները - դարվիստների՝ գոյու-  
թյան կռիվ, բնական ընտրության սկզբ-  
բունքների հիման վրա:  
Վորոշ սոցիալ-դարվիստական շե-  
նք.

շում, ինչպես տեսնում ենք, ունեցավ և դար-  
վիսը: Այդ բոլորը բռնում էր կրակից, վոր  
դարվիսը գերագնահատեց գոյության կռի-  
վերը, մարդու նագման մասին խոսելիս, նա  
սահմանափակվեց բիրոդիական որենքնե-  
րով, չկարողացավ հասկանալ մարդկային  
հասարակության սոցիալական որինաչա-  
փությունները, այլ կերպ ասած, հետևելով  
բուրժուական մտանոչություն, մեխանիս-  
տական մատերիալիզմին, չկարողացավ  
դիպեկտիկորեն վերլուծել մարդու առա-  
ջացման պրոցեսը, նշել աշխատանքի և  
գործիքի դերն այդ պրոցեսում: Դարվիսը  
վերջնականապես հաստատեց մարդու կեն-  
դանական նագումը, բայց թե ինչպես  
կատարվեց կենդանական նախահոր  
մարդկայնացման պրոցեսը - այդ չպարզեց:

Դարվիստների թերի կողմերն ոգտագոր-  
ծել և ոգտագործում են բոլոր տիպի  
իդեալիստները (վիտալիստներ և այլն) և սո-  
ցիալ-դարվիստները: Սոցիալ-դարվիստ-  
տները հենվելով դարվիստների վորոշ վի-  
ճելի, թերի կետերի վրա, և ընդհանրապես

Գարվինիզմի վրա մոտեցաւ մարդկային  
հասարակության, որին աւելի ափոթեցուն են  
լուսարարության: Գարվինիզմի բիոլոգի-  
ական որեւէքերով ձգտում են հիմնա-  
վորել քոլոնիալիզմի, կապիտալիզմի և  
կան հասարակակարգի տիրապետու-  
թյունն և անխախտութիւնը և դրանից  
բխող – բանվորության շահագործումը,  
վերջինս համարելով բնական որեւէքե-  
րից բխող մի անհրաժեշտութիւն: Բիո-  
լոգիական որեւէքերով նրանք աշխա-  
տում են հիմնավորել նաև ռասայական  
շտրիկիզմը, գաղութային վավթոչական  
քաղաքականութիւնը: Առաջագործելով  
«Շտրայա», «այնիվ» ռասայի (վորեն,  
նրանց կարծիքով – արիականը) պրոք-  
լեմը, նրանք «Կորիին» ռասաների (նը-  
րանց կարծիքով՝ դեչին, սև ցեղերը,  
վայրի ազգութիւնները) այլատու ման,  
վոչնչացման բնական անհրաժեշտու-  
թյան հարցն են դնում (այս աչքով հետ  
արդարացում իմպերիալիստական, գա-  
ղութային քաղաքականութիւնը)

չութային քաղաքականութիւնը):  
Սոցիալ-դարվինիստներն ոգտագործում  
են դարվինի մալթուսականութիւնը (թեև  
մենք տեսանք, Վոր Գարվինի տեսակետը՝  
մարդկության վերաբերյալ կիրառած՝ Մալ-  
թուսի որեւէքին այլ մոտեցում ունի):  
Գարվինի թռիչքային փոփոխութիւնների  
մասին համարյա չը խոսելը նույնպէս  
անիթ տվեց սոցիալ-դարվինիստներին բի-  
ոլոգիապէս հիմնավորել նաև «Տեղաշըր-  
ջումների», «Տեղափոխութիւններ» «ան-  
բնական» լինելը:  
Դեռ ենգելը իր «Բնութիւն դիա-  
լեկտիկա»-ում շատ ճիշտ նշել էր Գար-  
վինի անիմալիստ փորձերը մարդկային  
հասարակության և կենդանական աշ-  
խարհի որին աւելի ափոթեցուն են նույնաց-  
ման հարցում: Ենգելն արդեն տվել  
էր հակահարված սոցիալ-դարվինիստ-  
ներին և նշել նրանց անմիտ ձգտումը  
նույնացնելու գոյութիւն կոփիլը և դա-  
սակարգային կոփիլը: Ենգելը մեծ տար-  
բերութիւն է տեսնում կենդանու և

Մարդկանց մեջ նա ասում է. «Կենդանին լավ դեպքում հասնում է մինչև գոյության միջոցների հավաքման, իսկ մարդը նրանց արտադրում է նա գոյության այնպիսի միջոցներ (խոսքիս լայն մտքով) և ձեռք բերում, վորոնց բնությունն առանց նրան չէր արտադրի: Այդ արդեն անթույլատրելի յե դարձնում կենդանական հասարակությունների որենքների փոխանցումն, առանց վերապահումների (особо) , մարդկային հասարակության բնագավառը .» .

«Վերջապես, արտադրության կապիտալիստական ձևի ժամանակ, արտադրությունն այն աստիճանի վրա յե բարձրանում, վոր հասարակությունն արդեն հնարավորություն չի ունենում սպառելու արտադրած միջոցները՝ գոյության, հրճվանքի, վարճուցման, վորովհետև արտադրողները խնշող մեծամասնության համար բռնի կերպով արգելք է դրված ոգ.

տագործելու այդ միջոցները» . . .

Նույն տեղ շարունակում է. «յուրաքանչյուր տաս տարի արդյունաբերական կրիպիսը նորից վերականգնում է հավասարակշռությունը» վոչնչացնելով վերոհիշյալ միջոցները, նույնիսկ սխոշոր չափով և իրանց արտադրողներին .»

Արեմն, չի կարելի «սնդի պակասությունը պատճառ բերել դասակարգային պայքարի: Կապիտալիստական հասարակակարգի համար բնորոշ է մի կողմից գործապրկությունը և դրա հանդեպ՝ գոյության միջոցների (անդի) վոչնչացումն (որինակ՝ Ամերիկայում - գները չիջեցնելու սպառնալիքից փրկվելու համար՝ կաթի, սուրճի, ջորենի թափելը ծովի մեջ, վոչնչացնելը) .

«Այսպես կոչված՝ գոյության կռիվը, ասում է Ենգելսը, այնպիսի ձև է ընդունում, յերբ անհրաժեշտություն է ծագում բուրժուական կապիտալիստական հասարակության արտադրած արդյունքները (որոպրոտն), արտադրողական

ուժերը պաշտպանելու կասյիտալիստա-  
կան հասարակակարգի սպանիչ, քայքայ-  
իչ ներգործությունից, վորի համար ան-  
հրաժեշտ է իլել հասարակական արտա-  
դրության և բաշխման շեկավարությունը-  
այդ գործիչն անընդունակ տիրող դասա-  
կարգից և տալ արտադրողների մաս-  
սային, այսինքն, այդ է — սոցիալիստա-  
կան հեղափոխություն: (Энгельс. Диалектика  
природы. 45)

Սոցիալ-դարվինիստներն ամեն կերպ  
աշխատում են դարվինիզմը հարմարեց-  
նել իրենց ձգտումներին, ծառայեցնել  
բուրժուազիայի շահերին:

Դարվինի մի քանի թերի արտահայտու-  
թյուններն առիթ տվեցին բուրժուական  
գիտնականներին դարվինիզմի հակակրոն  
եյությունը հերքելու, դարվինիզմը կրոնի  
հետ հաշտեցնելու (որինակ՝ Վասման, Պա-  
տե և ուրիշ գիտնականների կողմից):

Արդի հայտնի բուրժուական դարվինիստ  
Էյուդովիգ Պատեն — կրոնը համարում է  
«բարձրագույն բարիք», իսկ միլիտարիզմը  
նրանով է արգարացնում, վոր նրա կար-

ծիքով «ամբողջ բնությունը ռազմականա-  
ցած է:»

Դարվինը հիմնական աշխատության մեջ  
(չնայած, վոր աշխատությունն իր բնույթով  
ամբողջապես հակակրոն է) ունի մի շարք  
իրար հակասող արտահայտություններ. մի  
կողմից կարծես նա յել հաշտեցնում է  
կրոնը գիտության հետ: «Յես վոչ մի  
հիմք չեմ տեսնում, — ասում է Դարվինը,  
թե ինչու այս գրքում արտահայտած  
տեսակետները կարող են վորև է մեկի  
կրոնական պագամուկը վիրավորել:»<sup>1)</sup>

Մի քիչ հետո ասում է: «Կա վեհու-  
թյուն այդ տեսակետում, ըստ վորի կյան-  
քն իր տարրեր արտահայտություննե-  
րով արարիչը սկզբում ներշնչել է մեկ  
կամ սազմանափակ ձևերի մեջ:»<sup>2)</sup>

Միևնույն ժամանակ նույն գրքում  
նա նշում է, վոր շատերը հեշտու-  
թյամբ քոչարկում են իրանց անգի-

<sup>1)</sup> Ղ. Դարվին. Происхождение видов. էջ 424

<sup>2)</sup> Նույն. էջ 430.

տոմսյունը գերբնական գործո՞ւներ մեք  
բերելով. « Այնքան հեշտե, -ասում է Դար-  
վինը, քոչարկել մեր անգիտութիւնն այն-  
պիսի արտահայտութիւնների ծանկի տակ,  
ինչպես «ստեղծագործութեան պլան»,  
«գաւիափարի միասնութիւն» և այլն և յեր-  
վակայել, թե մենք տալիս ենք բացատրու-  
թիւն, մինչ դեռ միայն կրկնում ենք փաս-  
տըն ուրիշ արտահայտութիւններով:»<sup>\*)</sup>

Մենք սկզբում արդեն տվեցինք պատ-  
կերն այն սոցիալական միջավայրի, վոր  
ապրել էր Դարվինի վրա և բազա յեր  
ճառայել Դարվինի սիմվոլիզմի համար:  
Վորոշ միջավայրի ենունդ լինե-  
լով, Դարվինը չեր կարող կտրուկ գնել  
մի շարք սկզբունքային հարցեր, ինչպես՝  
թոհիչքները, վերաբերմունքը դեպի կրոնը:  
Մի շարք փաստեր գալիս են ապացու-  
ցելու, վոր «Տեսակաների ծագման» հեղինա-  
կը ժամանակի և իր շրջապատի ազ-  
դեցութեան ներքո ստիպված էր վիրոշ

<sup>\*)</sup> Դ. Դորսի. Происхождение видов եջ 425

դեպքերում քոչարկել իր ժամանակի պա-  
հանջներին: Համապատասխանող յեղ-  
րակացութիւնները:

Մենք մեր հոգվածներից մեկում<sup>\*\*)</sup>  
մանրամասն կանգ եյինք առել Դարվի-  
նի հակակրոն մտածելակերպի փաս-  
տերի վրա: Յերկրաբան էյայելին գրան-  
նամակում նա նշում է իր գրքում հան-  
դիպած մի անհազոշ արտահայտու-  
թիւնը և այդ առթիվ ասում է. «վիշե-  
լով հաւարակական կարծիքին գործա-  
ծեցի, հնգամատչանի «արտահայտութիւնը  
- «ստեղծել» են (խոսքը առաջին կյանքի  
ծագման մասին է. Ի. 9.), վորով յես ցան-  
կանում էյի ասել «հայտնվել» են ինչ  
բոլորովին անհայտ պրոցեսի միջոցով<sup>\*\*\*)</sup>

Ավելի կտրուկ է արտահայտվում մի  
գերմանացի ուսանողին գրան նամա-  
կում, ուր ասում է. «Գիտութիւնը և ֆիս-

<sup>\*)</sup> Տես՝ «Անաստված» 1932. N 7-8. Ի. Գ. Դարվի-  
նի վրա և կրոնը.

<sup>\*\*)</sup> Դ. Դորսի. Писема. եջ 73

տող վոչ մի առնչութիւն չունեն".  
համաձայն չէ, «վոր յերբևիցե կարող եր  
գոյութիւն ունենալ հայտնութիւնը»:

Վերջապես Մարքսին գրած մի նամա-  
կից (1880թ. 13. X) պարզվում է, թե՛ ինչու  
կտրուկ կերպով չի դրել կրոնի դեմ ուղ-  
իչական պայքարի հարցը: Դարվիչի կարծի-  
քով՝ «քրիստոնեության և թեոկրատի դեմ  
դեմ ուղիղակի տվյալները հասկիլ թե՛  
վոր և է տպավորութիւն թողնեն մարդ-  
կանց վրա և մտքի ազատության ա-  
մենամեծ ոգոտը տալիս է մտքի ա-  
տիճանական լուսավորումը, վորն ար-  
դյունք է գիտության պարգևացման:»<sup>4)</sup>

Որեմն, գիտության նվաճումները բնա-  
կանորեն աստիճանաբար անհիմն  
կղարչներ կրոնը — ասա Դարվիչի միտքը:  
Թերևս ինքը Դարվիչն էլ, վորպես հա-  
մոզված հակակրոն, ուղիղակի պայքա-  
րեր կրոնի դեմ, քայց յեթե չի արել

ինչպես Դարվիչն է ասում. «հավանա-  
կան է, վոր այս բանուս ինչ վրա ազ-  
դել են, անվերի քան պետք եր, միտքն այն  
ցալի անթիվ, վոր յես պատճառան  
կիւնեի ընտանիքիս անդամներից վո-  
մանց, թիւ է այս կամ այն կերպ պաշտ-  
պանեի կրոնի դեմ ուղիղակի հարձա-  
կումները:»<sup>5)</sup> (Տես՝ Кольман. «Правда» 1932թ.)

Դարվիչի պիտի հակակրոնական ելու-  
թիւնը հենց առաջին որերից պատ-  
ցին մանավանդ կրոնականները: Դար-  
վիչի գրքի լոյս տեսնելու որից մի տա-  
րի անց Ռքսֆորդում տեղի ունեցավ  
դիսպուտ, ուր ռքսֆորդի յեպիսկոպոսը  
մեղադրում եր Դարվիչի ուսմունքը այն  
բանում, վոր նա բոլորովին հերքում է  
արարչի գոյութիւնը և հակասում է  
կրոնական գրքերի ասածներին:

Վերջապես իր «Մարդու ծագում» գրք-  
քում Դարվիչն ասում է, վոր նախա-  
մարդկային շրջաններում մարդուն  
հայտնի չեր աստծո գաղափարը և  
նշում է մի շարք ազգութիւններ,

<sup>4)</sup> Кольман. О Карле Марксе «У. Правда»  
«Правда» 1932. N 109.

վորոնք բոլորովին չուրկ են կրոնա-  
կան զգացմունքներից:

Ամփոփելով մեր առաքելները, պետք է  
նշել, վոր Դարվինիզմն իր էյուլթյամբ  
մի այնպիսի ուսմունք է, վոր հիմնովին  
հարվածում է կրոնին, ժխտելով որգա-  
նիզմների և մարդու անսովածային  
ծագումը: Նա հիմնավորեց եվոլուցիա-  
յի, փոփոխականության գաղափարը,  
ժխտելով մետաֆիզիկական մեկնաբա-  
նությունները բիոլոգիայի բնագավառում:  
այս տեսակետից Դարվինիզմն ունի Տե-  
հափոխական բնույթ:

Դարվինը նշեց եվոլուցիայի պատճառ-  
ները, առաջադրելով գոյություն կռվի,  
բնական ընտրութ: Ին սկզբունքները:

Բայց, ինչպես տեսանք, Դարվինիզմն  
ունի մի շարք թերի կողմեր, վորոշ  
հարցերի նկատմամբ անվճռական, քո-  
չարկված արտահայտություններ:

Դարվինն իր ժամանակաշրջանի ծը-  
նադ է և բնական է, վոր իր ուսմուն-  
քը կրում է բուրժուական իդեոլոգիայի

կնիքը

Միակ, քոչարկված, թերի արտահայտու-  
թյուններն է ագտագործվում են բուրժուա-  
կան գիտնականների կողմից և մեկնա-  
բանվում բուրժուական իդեոլոգիայի տե-  
սակետից:

Ուսումնասիրելով Դարվինիզմը, մենք  
քննադատորեն պետք է մոտենանք թե-  
րի կողմերին: Մարքսը, Ենգելսը, Լենինը  
խոշոր նշանակություն տալով բնագի-  
տության նվաճումներին, շեշտեցին նաև  
Դարվինիզմի առանձնահատուկ դերը,  
քննադատության, վերամշակման յե-  
թարկելով վորոշ սկզբունքները: Նշե-  
լով նրա Տեհափոխական բնույթը, մի-  
ևնույն ժամանակ յերևան հասեցին  
բուրժուական մտքի սահմանափակ ար-  
տահայտությունները, դիալեկտիկա-մա-  
տերիալիստական տեսանկյունով լուսա-  
բանեցին որգանական եվոլուցիայի  
մի շարք հիմնական հարցերը:

Մի հիմնական բան շեշտեցին մար-  
քսիզմի հիմնադիրները այդ այն է, վոր

դարձիւնիւմը, մարտիտական մեթոդո-  
գիայով վերամշակվան, ունենալով հեշա-  
փոխական բնույթ, վոչ մի դեպքում չի  
կարող ծառայել վորպես մեթոդ մարդ-  
կային հասարակության որինաչափու-  
թյունները լուսարանելու համար, այսին-  
քէն՝ դարձիւնիւմի որենքներով, բիւլո-  
գիական որենքներով չի կարելի որդա-  
նական աշխարհի վարգացման նոր,  
ուրույն ետապի՝ մարդկային հասարա-  
կության վարգացման որինաչափու-  
թյունները վերլուծել:

Առցիակ- դարձիւնիւմների ձգտումներն  
ունիվերսալ բնույթ սուս դարձիւնիւ-  
մին պետք է յենթարկվեն սուր քննա-  
դատության:

Քորթուական գիտնականներն ոգտա-  
գործում են դարձիւնիւմի թոյլ կոչմերը  
բոլորովին դարձիւնիւմը հերքելու համար,  
կամ ել նրան բուրժուապիայի շահերին  
ծառայեցնելու համար տայիս են համա-  
պատասխան մեկնարանություն:

Քորթուական յերկրներում, ինչպես գի-

հալածվում է դարձիւնիւմը (որինակ՝ Ամե-  
րիկայում), կամ ել զտման են յենթար-  
կուս դարձիւնիւմի հեշափոխական  
սկզբունքները և հաշտեցնում նրանց  
տերտերական ուսմունքների, կրոնի հետ  
(որինակ՝ Հերովիզ, Պատե և այլ բնա-  
գետներ):

Ճեղ միայն մեր յերկրում, պրոլետարիա-  
տի հաշտանակի յերկրում, ուր դրվան են  
խոշորագույն հարցեր յերկրի նորոգման,  
վերախառուցման պլանային խնդիրներ,  
միայն սյն յերկրում, ուր աշխատանք է  
տարվում դասակարգերի վերացման  
և կոմունիստական հասարակակարգի  
կանուցման ուղիւթայամբ, կան բոլոր հա-  
րավորությունները եվոլուցիոն ուսմունքի  
խորացման, վարգացման համար:

Դարձիւնիւմի, եվոլուցիոն ուսմունքի հար-  
ցերը վերամշակելով՝ պետք է ծառայեն  
մեր յերկրի սոցիալիստական շինարարու-  
թյան, պետք է ծառայեն միջազգային  
պրոլետարիատի դասակարգային սպա-  
շարին:

Քրականություն.

1. Տրմիրյազեզ. Դարվին և Նրա ուսմունքը.
2. Ռ. Գաբրիելյան. Եվոլուցիոն թեորիա և Չ. Դարվինի ուսմունքը (ապակետիկ)
3. Ռ. Գաբրիելյան. Չ. Դարվին (Կենսագրական).
4. " " Դարվինի դժարագիտությունը "Անաստված" 1931. № 9-10, 11, 12
5. " " Դարվին և կրոնը "Անաստվ." 1932. № 8.
6. Պ. Ն. Մարտի Եագման Զարցը և բուրժուական գիտությունը. "Անաստվ." 1933. № 3.
7. Պ. Ն. Մարտի. Բնագիտության կրիտիկը բուրժուական յերկրներում. "Անաստվ." 1933. № 9, 10.
8. Բուխարին. Դարվինի դժարագիտությունը. "Անաստ." 1932-1933.

157

Մոսկերեն.

- Գիտության. Учение Дарвина и Марксизм-Ленинизм. Партиздат. Москва. 1932
- Энгельс. Антидюринг. Диалектика природы
- Спенсер. Биология и марксизм

Դարվինի ուսմունքի մասին.

- Դարվին. Происхождение видов,
- " " Происхождение человека.
- Гессе. Происхождение видов.
- Уоллес. Дарвинизм
- Мензбир. Зо Дарвина
- Делаж и Гольдсмит. Теория эволюции
- Т. Миразев. Ч. Дарвина и эга теория



22 ФЕВ. 1936

99

1

3773

СТАБИЛИЯ  
Борьба вокруг гарьки

СЕРИЯ 120  
СЕРИЯ 120 . Гарьки  
Серия 120